

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏՍԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

« 27 » _____ 01 _____ 2022 թ.

ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի նախագահությունը, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ՝ **Աշոտ Սաղյան** (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան Բուսաբանության ինստիտուտ **ՊՈԱԿ-ը**, ի դեմս տնօրեն՝ **Անահիտ Ղուկասյանի** (այսուհետ՝ Կազմակերպություն) որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), Ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով նախատեսված **151 557 100 (հարյուր հիսուսնեկ միլիոն հինգ հարյուր հիսուս նյութ հազար հարյուր)** ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնությունը, Ծրագրի առաջադրանքը, օրացուցային պլանը, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի **2.4** կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի **6**-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6 ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այտուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության

կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում ՀՀ ԳԱԱ ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում սպահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ սպրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է **151 557 100 (հարյուր հիսունմեկ միլիոն հինգ հարյուր հիսու նյոթ հազար հարյուր)** ՀՀ դրամ:

4 Մոնիթորինգ

4.1 Կոմիտեն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ս/2 հրամանով հաստատված “Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի”:

5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 ՀՀ ԳԱԱ-ի Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 ՀՀ ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24

Հ/հ 900011024115

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Նախագահ՝


(ստորագրություն)
ԱՐԱԿԵԼՅԱՆ Ա. Տ.


Ծրագրի գիտական ղեկավար՝

(ստորագրություն)

ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան
Բուսաբանության ինստիտուտ ՊՈԱԿ

ք. Երևան, Աճառյան 1

Հ/հ 900018005372

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Տնօրեն


(ստորագրություն)
Անահիտ Ղուկասյան

(Անահիտ Ղուկասյան)

(անուն ազգանուն)



«27» 01 Հավելված 1
2022 թ.
N Է-13 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի նախագահ՝ Աշոտ Սաղյանը և ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի տնօրեն՝ Անահիտ Ղուկասյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «27» 01 2022 թ. N Է-13 պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 151557100 (հարյուր հիսունմեկ միլիոն հինգ հարյուր հիսունյոթ հազար հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է ՀՀ ԳԱԱ միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ ԳԱԱ

ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտ

Նախագահ՝

Տնօրեն՝


(ստորագրություն)


(ստորագրություն)

ԱՇՈՏ ՍԱՂՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՂՈՒԿԱՍՅԱՆ



ԱՌԱՋԱՂԲԱՆՔ

Ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի

“Հայաստանի բուսական աշխարհի ուսումնասիրության և պահպանության Էկոլոգա-աշխարհագրական ասպեկտները”

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի գիտական գործունեության ծրագիրը վերաբերվում է “Հայաստանի բուսական աշխարհի ուսումնասիրության և պահպանության Էկոլոգո-աշխարհագրական ասպեկտները” թեմատիկային, որն անմիջականորեն բխում է ինստիտուտի զարգացման և ռազմավարության ծրագրի հայեցակարգից: Հայաստանի Ժամանակակից և բրածո ֆլորայի ուսումնասիրման արդյունքները անհրաժեշտ են բուսաբանության բոլոր ուղղությունների թե՛ տեսական, թե՛ կիրառական զարգացման համար, ինչպես նաև վայրի բույսերի օգտագործման և պահպանման տեսանկյունից: Բուսաբանական այգիները (Երևանում, Վանաձորում և Աևանում) հանդիսանում են գիտական, էկոլոգիական, ուսումնական և ռեկրեացիոն նշանակություն ունեցող գիտական հաստատություններ, որոնք զբաղվում են բույսերի ներմուծման և կլիմայավարժեցման վերաբերյալ արժեքավոր հետազոտությունների կատարմամբ: Բույսերի կենսաբազմազանության ոլորտում այդ եզակի և ինքնատիպ գիտական հաստատության հիմնական նպատակը հանդիսանում է Երկրագնդի տարբեր բուսա-աշխարհագրական տարածաշրջաններից բարձր գեղազարդ և սոստեսապես արժեքավոր բուսատեսակների ներմուծումը, ցուցադրական գիտական հավաքածուների ստեղծումը, էկոլոգիական նոր պայմաններին դրանց հարմարողականության բացահայտումը և կենսաէկոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրումը, առավել հարմարված տեսակների քաղաքների և բնակավայրերի կանաչապատման մեջ ներդրումը:

3. Աշխատանքի ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):

- Հայաստանի ֆլորայի, բուսականության և բուսական ռեսուրսների հետազոտություն;
- Կոմկասի կրիտիկական տաքսոնների կարգաբանական ուսումնասիրում;
- ՀԱԱՀ-ից ստացած հերբարիումի մշակում և ինսերացիա;
- Հերբարիումի թվայնացում և օնլայն հասանելիացում (Global Biodiversity Informacion Facility, Global Plants, JACQ Virtual Herbaria, World Flora Online պորտալների միջոցով) ;
- Հայաստանի հազվագյուտ տեսակների ադապտիվ պոտենցիալը ըստ կենսաձևերի /խոտ, թուփ, ծառ/ – անատոմիական հատկությունների բացահայտում;
- Հայաստանի ծառատեսակների ծաղկավորում մորֆոլոգիայի ուսումնասիրություն և տեղեկատվական բազայի ստեղծում, «Հայաստանի ծառերի և թփերի ծաղկավորում ստույգ»-ի աշխատանքների ավարտում;
- Հայաստանի ֆլորայի Հիրիկազգիների (*Iridaceae*) ընտանիքի ներկայացուցիչների պալինոկարգաբանության ուսումնասիրում;
- Էթնոբուսաբանական ուսումնասիրությունների շրջանակներում նախատեսվում է ուսումնասիրել. բույսերի կիրառումը ավանդական ծեսերում, բույսերի դերը ազգային հավատալիքներում; բույսերի բուժիչ, ուտելի, համեմունքային, տեխնիկական նպատակով օգտագործման մասին նոր տվյալների հավաքագրում; հայկական ժողովրդական բուսանունների (Ֆիտոնիմների) գրանցում տարբեր դիալեկտներում (մասնավորապես՝ Սյունիքի բարբառում):

- Հազվագյուտ և անհետացող, ինչպես նաև արժեքավոր տեսակների վիճակի դաշտային ու սուսնասփրություններ;
- Թիրախային բուսատեսակների անհետացման ռիսկի գնահատում ըստ Բնության պահպանության միջազգային միության չափադրոշիչների;
- Համաձայն տեսակների անհետացման ռիսկի գնահատման արդյունքների՝ վտանգված տեսակների սերմերի հավաք բնական միջավայրից;
- Վտանգված տեսակների սերմերի *ex situ* հավաքածուների համալրում՝;
- Մոլեկուլյար ; Կենսատեխնոլոգիական հետազոտությունների իրականացում ;
- Վտանգված և արժեքավոր տեսակների կենդանի հավաքածուների ստեղծում և ընդլայնում;
- Թիրախային բուսատեսակների *ex situ* պահպանության սպասեցում;
- Թիրախային բուսատեսակների *in situ* պահպանության բարելավման եղանակների մշակում;
- Հայաստանի բուսական ծածկույթի փոփոխության դինամիկայի ուսումնասիրում՝ գլոբալ և համաշխարհային նշանակություն ունեցող, մասնավորապես էնդեմիկ, հազվագյուտ և ռելիկտային բուսատեսակներ պարունակող էկոհամակարգերի ի հայտ բերման և հետազոտության նպատակով;
- Հիմնական անտառային համակարգերի արդյունավետության բարձրացման, բույսերի ներմուծման և կլիմայավարժեցման հիմունքների մշակում;
- Բնակավայրերի կանաչապատման գիտական հիմունքների մշակում: Հայաստանի բուսաբանական այգիները որպես համաշխարհային ֆլորայի ուսումնասիրության և կենդանի հավաքածուների ստեղծման ու պահպանման կենտրոն;
- Արևելյան Ասիայի, Հյուսիսային Ամերիկայի դենդրոֆլորաների, ինչպես նաև *Spiraea*, *Philadelphus* և այլ ցեղերի ներկայացուցիչների ներմուծումը Երևանի բուսաբանական այգի;
- Երևանի բուսաբանական այգու ծաղկային հավաքածուների հարստացումը *Asteraceae*, *Caryophyllaceae*, *Primulaceae*, *Iridaceae*, *Liliaceae* ընտանիքների նոր բարձր գեղազարդ տեսակներով ու սորտերով;
- Արևադարձային ու մերձարևադարձային բույսերի հավաքածուի հարստացումը *Apocynaceae*, *Araceae*, *Crassulaceae* և այլ ընտանիքների նոր ներկայացուցիչներով;
- Գեղազարդ (ներմուծված միամյա և բազմամյա) բույսերի աճի ու զարգացման վրա կենսաբանական ծագման աճի խթանիչների ազդեցության ուսումնասիրություններ:

4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

Նախատեսվում է շարունակել աշխատանքները "Հայաստանի անոթավոր բույսերի ստլաա"-ի ստեղծման վերաբերյալ, որում կներկայացվեն Հայաստանի ֆլորայի 913 ցեղերի և 160 ընտանիքի պատկանող 3800 տեսակների 1/3 մասը: Ատլասում կտեղադրվի տվյալ տեսակի լուսանկարը բնության մեջ, կնշվի հավաքի տեղավայրը, կորոդինատները, հավաքի տարեթիվը, կրկնությունը: Նախատեսվում է շարունակել Կարգաբանության բաժնում պահվող ՀԱԱՀ-ից ստացած հերբարիումային նյութի որոշում և մշակում: Նախատեսվում է *Punica granatum* L. տեսակի ուսումնասիրման շարունակում և «Վայրաճ նոնենին Հայաստանում» թեմայով մենագրության պատրաստում:

Կշարունակվեն տաքսոնոմիական և կենսա-մորֆոլոգիական ուսումնասիրությունները *Pyrus* ցեղի տարբեր տեսակների, և նույն ժամանակ *Chenopodiaceae* ընտանիքի ներկայացուցիչների *in-situ* և *ex-situ* պայմաններում:

Ներկայումս Բուսաբանության ինստիտուտը ՀՀ միակ գիտական հաստատությունն է, որտեղ զարգանում է համեմատական անատոմիան: Այս մեթոդով ստացված տվյալները, հնարավորություն ստեղծելով ճշտումներ մտցնել տաքսոնի մեկնաբանման հարցերում,

օգտագործվել են ինստիտուտում տարվող մեծ թվով գիտական աշխատանքներում: Անատոմիական ուսումնասիրությունների շրջանակներում 2022թ. նախատեսվում է մի շարք հազվագյուտ ցեղերի աշխարհագրական առանձնահատկությունների վերլուծությունը՝ կապված կենսացիկլի, առնակի մորֆոլոգիայի և պլոիդության աստիճանի հետ՝ կիրառելով համեմատական սկզբունքը: Շարունակվելու է Colchicum ցեղի անատոմիական ուսումնասիրումը: Որպես արդյունք նախատեսվում է այդ ցեղերի ծագման և տեսակների առաջացման օջախների ճշգրտում:

Պալիմոլոգիական ուսումնասիրությունների շրջանակներում 2022թ. կարգաբանական նպատակով կշարունակվեն Հայաստանի ֆլորայի ծաղկավոր բույսերի տարբեր տաքսոնոմիական խմբերի պալիմո-մորֆոլոգիական ուսումնասիրությունները: Շարունակվելու է *Solanales* և *Convolvulales* կարգերի (*Solananae* վերնակարգ) մի շարք ընտանիքների պալիմոլոգիական ուսումնասիրությունները, այդ խմբերի ներսում էվոլյուցիայի և ֆիլոգենիայի հարցերի ճշտման նպատակով:

Կարիոլոգիական ուսումնասիրությունների շրջանակներում 2022 թ. նախատեսվում է շարունակել Հայաստանի ֆլորայի հազվագյուտ, անհետացող, էնդեմիկ բույսերի ցիտոլոգիական հետազոտությունների կատարում: Նախատեսվում է կատարել հազվագյուտ կարմիրգրքային տեսակների կարիոտիպերի ուսումնասիրություն:

Հնէաբուսաբանական ուսումնասիրություններ: Բրածո բույսերի ուսումնասիրման ասպարեզում կկատարվեն աշխատանքներ ինստիտուտում հավաքածուների կարգավորման, Հայաստանի տարածքում հին և նոր տեղակայքերի կատալոգի ստեղծման և դրանց պահպանությանն ուղղված միջոցառումների հանձնարարականների մշակման ուղղությամբ: Հնէաբուսաբանության ուղղության զարգացման նպատակով նախատեսվում է կատարել բրածո բույսերի տեսակների որոշման համալիր աշխատանքներ: Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի բրածո ֆլորաների կազմը որոշելու նպատակով կատարել առանձին բրածո տաքսոնների համալիր հետազոտություններ, ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտում կազմակերպել հնէաբուսաբանական թանգարան: Վերջին տարիների բիոսֆերային հետազոտությունները հստակ ցուցադրում են բնագիտության ընդհանուր ֆոնդում հնէաբուսաբանական (պալեոբուսաբանության) և հնաբուսաբանական (արխեոբուսաբանության) հետազոտությունները շրջանառության մեջ դնելու անհրաժեշտությունը, քանի, որ անցյալի՝ մահացած բույսերի հետազոտումը բացահայտում է նախկին կենսաբազմազանությունը, երկրաբանական դարաշրջանների միջավայրի վերականգնման բանալին, ինչպես նաև կանխագուշակում ասպագա կլիմայական փոփոխությունները: Մահացած բույսերի մնացորդները ցույց են տալիս, թե որ դարաշրջանում ինչ բուսականություն է գերիշխել, բնականաբար նաև թե ինչ կենդանական աշխարհ, լանդշաֆտներ և ինչ կլիմայական պայմաններ են եղել անցյալի տարբեր ժամանակահատվածներում՝ կես միլիարդ տարի առաջ, 100 միլիոն տարի, 2 միլիոն տարի, թե 10 հազար կամ 200 տարի առաջ: Անցյալ երկրաբանական դարաշրջաններում անտառների զբաղեցրած տարածքների ուսումնասիրությունը (ըստ բրածո ծառաթփատեսակների ուսումնասիրության) տալիս է բանալի, այսօր անտառապատման աշխատանքների համար գիտական հենք ապահովելու համար: Ջրային բրածո բույսերի ուսումնասիրությունը հիմք է հանդիսանում հասկանալու համար անցյալ երկրաբանական ժամանակաշրջաններում ջրային ավազանների տեղակայման առանձնահատկությունները, ինչպես նաև դրանցով պայմանավորված կլիմայական պայմանների առանձնահատկությունները, որը իր հերթին կարող է գիտական հենք ապահովել ներկա ջրաբանական հետազոտությունների խորացման համար:

Երկրաբուսաբանության բնագավառում նախատեսվում է իրականացնել Հայաստանի Էկոհամակարգերի և նրանց փոփոխությունների ուսումնասիրություններ. Հայաստանում բացահայտել հազվագյուտ Էկոհամակարգերը և ստեղծել Հայաստանի Էկոհամակարգերի Կարմիր գիրք: Կշարունակվեն ուսումնասիրություններ Էկոհամակարգերի վիճակի գնահատման,

գոյության սպառնալիքների պարզաբանման, կլինայի փոփոխության պատճառով հնարավոր փոփոխությունների կանխատեսման, ինվազիվ տեսակների տարածման, ինչպես նաև այլ սպառնալիքների գնահատման վերաբերյալ: Առաջին հերթին ուշադրություն պետք է դարձվի խոտաբույսերի էկոհամակարգերին, քանի որ դրանք առավել արագ են արձագանքում շրջակա միջավայրի փոփոխություններին և դրանց հետևանքները արտացոլվում է կազմի ու կառուցվածքի փոփոխություններում: Մարդածին գործոնի ազդեցության հետևանքները խոտաբույսերի էկոհամակարգերում նկատելու համար բավական է 2-3 տարի, այն դեպքում երբ ծառաբույսային էկոհամակարգերում անհրաժեշտ է մի քանի տասնամյակ, երբեմն անգամ հարյուրավոր տարիներ: Պլանավորվում է շարունակել մերձալայան բուսանակության մանրամասն ուսումնասիրությունները:

Բույսերի ֆիզիոլոգիայի ոլորտում նախատեսվում է որոշ «կենսաբազմազանության թեժ-կետերում» աճող հազվագյուտ բուսատեսակների ֆիզիոլոգիական առանձնահատկությունների, այդ թվում ջրային ռեժիմի (ազատ և կապված ջուր, ջրային անբավարարություն), տրանսպիրացիայի և ֆոտոսինթեզի ինտենսիվության, պլաստիդային պիգմենտների քանակության (քլորոֆիլ ա և բ, կարոտինոիդներ) ուսումնասիրություններ, ինչպես *in-situ*, այնպես էլ *ex-situ* պայմաններում՝ նպաստելու ունենալով հազվագյուտ բուսատեսակների շրջակա միջավայրի գործոնների նկատմամբ ադապտիվ առանձնահատկությունների գնահատում, ըստ հարմարողականության աստիճանի, խոցելիության հնարավոր պատճառների բացահայտում և Հայաստանի բուսաբանական այգիներում համապատասխան միջոցառումների կազմակերպում հազվագյուտ տեսակների աճեցման հաջողության և *ex-situ* պահպանության համար:

Բույսերի ներմուծում և կլինայավարժեցում. ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի Երևանի բուսաբանական այգին իր Սևանի և Վանաձորի մասնաճյուղերով կիրականացնի հյուսիսային կիսագնդի բարեխառն գոտու ֆլորիստիկ տարբեր շրջաններից տնտեսապես արժեքավոր և բարձր գեղագարդ ծառաբույսերի ներմուծման գիտական հավաքածուների ստեղծման և գոյության նոր պայմաններում դրանց կենսակոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրման աշխատանքներին: Ծաղկային մշակաբույսերին նվիրված ուսումնասիրությունները կնպաստակառնողվեն Երևանի բուսաբանական այգում միամյա և բազմամյա գեղագարդ ծաղկաբույսերի հավաքածուների հետագա հարստացմանը, դրանց հարմարողականության ու բազմացման առանձնահատկությունների բացահայտմանը, ինչպես նաև քաղաքային կանաչապատման մեջ նոր տեսակների ու սորտերի ներդրմանը:

Արևադարձային և մենձարևադարձային բույսերին նվիրված ուսումնասիրությունները կշարունակվեն Երևանի բուսաբանական այգու կոլեկցիոն ջերմատան պայմաններում և նվիրված կլինեն նոր գեղագարդ տաքսոններով համալրմանը, դրանց կենսաբանական և ադապտացիոն առանձնահատկությունների պարզաբանմանը, ինչպես նաև առավել գեղագարդ ու դիմացկուն տեսակներն ինտերերային կանաչապատման մեջ տարբեր կրմաբաղիցիոն ձևավորումների համար առաջարկմանը:

Հայաստանի ֆլորայի գենետիկական ռեսուրսների պահպանության բաժինը ուսումնասիրում է Հայաստանի ֆլորայի վտանգված ներկայացուցիչների վիճակը բնության մեջ, մշակում և կիրառում է դրանց բնության մեջ (*in situ*) և բնությունից դուրս (*ex situ*) պահպանությունը: Բաժնում *ex situ* պահպանությունը իրականացվում է հիմնականում հետևյալ միջոցներով՝ սերմերի և ԴՆԹ-ի պահոցների ստեղծում և զարգացում, բույսերի կենդանի հավաքածուների ստեղծում և ընդլայնում, մեկուսացված հյուսվածքների (կլոնալ միկրոբազմացումը *in vitro*) պահոցի ստեղծում: Դաշտային դիտարկումները և մոլեկուլյար հետազոտությունները նպաստում են գիտական խնդիրների լուծմանը բույսերի տաքսոնոմիայի և կարգաբանության բնագավառում: *Ex situ* հավաքածուները կայուն հիմք են ստեղծում բույսերի տեսական և կիրառական ուսումնասիրությունների համար՝ առանց սվելորդ միջամտության

բնական պոպուլյացիաների մեջ: Հայաստանի Ֆլորայի Սերմերի Բանկի աշխատանքների ընթացքում նախատեսվում են հետևյալ աշխատանքների շարունակումը: Բուսատեսակների պոպուլյացիաների ուսումնասիրություններ և սերմերի հավաք ՀՀ բոլոր մարզերում: Հավաքների ընթացքում ակնկալվում է համալրել Հայաստանի Ֆլորայի Սերմերի Բանկի հավաքածուն: Կատարվելու են որոշ վտանգված տեսակների կարգավիճակի գնահատումներ: Համապատասխան հերբարիումային նմուշները պահվելու են Բուսաբանության ինստիտուտի բույսերի պահոցում (ERE): Կատարվելու են ծլունակության ուսումնասիրություններ բոլոր հավաքների վերաբերյալ: Հազվագյուտ բուսատեսակների առանձնյակները տեղափոխվելու են ինստիտուտի “Հայաստանի Կենսաբազմազանության Պահպանման Կենտրոն” *ex situ* պահպանության և հատուկ ուսումնասիրությունների նպատակով: Կատարվելու է Հայաստանի Ֆլորայի Սերմերի Բանկի տվյալների բազայի համալրում:

Կենսատեխնոլոգիայի ոլորտում Հայաստանի ֆլորայի հազվագյուտ և անհետացող տեսակների պահպանման և վերարտադրողականության նպատակով նախատեսվում է մշակել պայմաններ դրանց կլոնալ միկրոբազմացման և սերմնային բազմացման համար: Նախատեսվում է ներմուծել մեկուսացված կուլտուրայի մեջ Fabaceae ընտանիքին պատկանող հազվագյուտ տեսակներ՝ *Vavilovia formosa* և այլն: Աշխատանքները կկատարվեն կլոնալ միկրոբազմացման բոլոր փուլերով համաձայն ընդունված մեթոդիկայի, ինչպես նաև կուսումնասիրվեն մեկուսացված հյուսվածքների սորֆիկական և հորմոնալ պահանջարկները: Վերարտադրողական կենսաբանության և սերմնային բազմացման հավաքածուի հազվագյուտ բակլագիների տեսակների ուսումնասիրության համար նախատեսվում է բույսերի աճեցում *ex situ* պայմաններում, բույսերի գեներատիվ ոլորտի բազմացման համակարգի և մորֆոբիոմետրիկ ցուցանիշների միջև կապի որոշումը:

Կազմակերպության
տնօրեն


(ստորագրություն)

(Անահիտ Ղուկասյան)
(անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝


(ստորագրություն)

(Անահիտ Ղուկասյան)
(անուն ազգանուն)




ՕՐԱՅՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ*

Ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման


“Հայաստանի բուսական աշխարհի ուսումնասիրության և պահպանության էկոլոգա-աշխարհագրական ասպեկտները” ծրագրի

h/h	Անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները	կատարման ժամկետները	պահանջվող գումարը (հազար դրամ)
2022թ. 1-ին եռամսյակ		Հայաստանի ֆլորայի տարածնոմիական, կենսակարգաբանական ուսումնասիրություն; Հայաստանի ծառայտերի պալիտոմորֆոլոգիական ուսումնասիրություն; Հազվագյուտ տեսակների ցանքի և ծղեցման համար սերմերի նախապատրաստում: Սերմերի ցուցակի կազմում Բուս. ի-տի դելեկտուսի համար:	Մորֆոլոգո-հերբարիումային, պալիտոլոգիական, ցիտոլոգիական երկրաբուսաբանական, Ֆիզիոլոգիական ուսումնասիրություններ	Անալիզների արդյունքների ամփոփում հոդվածների հանձնում:	01.01.2022-31.03.2022	30 311,42
2022թ. 2-րդ եռամսյակ		Հայաստանի ֆլորայի հազվագյուտ, անհետացող, էնդեմիկ բույսերի ցիտոլոգիական հետազոտություններ: Հայաստանի բուսականության դասակարգման սխեմայի վերաբերյալ աշխատանքներ: դաշտային աշխատանքներ էքսպոզիցիոն հողամասում: Տարածքի բարելավում, հավաքածուի գույքագրում: Բուսաբանական այգու ծաղկաեղջերի ձևավորում և խնամք:	Մորֆոլոգո-հերբարիումային, պալիտոլոգիական, ցիտոլոգիական երկրաբուսաբանական, Ֆիզիոլոգիական ուսումնասիրություններ	Հոդվածների տպագրում մասնակցություն Միջ. Կոնֆերանս. Գիտական աշխ. զեկուցումներ Ին-տի գիտ. խորհրդում	01.04.2022-30.06.2022	37 889,27
2022թ. 3-րդ եռամսյակ		Չերբարիումային նյութի որոշում: Հայաստանի բուսականության դասակարգման սխեմայի մշակման վերաբերյալ աշխատանքներ: Դաշտային աշխատանքներ էքսպոզիցիոն հողամասում, բույսերի խնամք: մերձարևադարձ և արևադարձ. բույսերի գիտական հավաքածուի ղեկավարման ուղղությամբ աշխատանքներ: Բուսաբանական այգու ծաղկաբույսերի խնամք, տնկանյութի հավաք և նախապատրաստում հաջորդ վեգետացիոն շրջանի համար, տարբեր ծաղկային հավաքածուների ստեղծում: վտանգված տեսակների սերմերի հավաք, վերամշակում և ex situ երկարաժամկետ պահպանություն “Հայաստանի ֆլորայի սերմերի բանկ”-ում	Մորֆոլոգո-հերբարիումային, պալիտոլոգիական, ցիտոլոգիական երկրաբուսաբանական, Ֆիզիոլոգիական ուսումնասիրություններ	Հոդվածների տպագրում Մասնակցություն Միջազգային կոնֆերանսներում.	01.07.2022-31.09.2022	37 889,27
2022թ. 4-րդ եռամսյակ		Չերբարիումային նյութի ուսումնասիրում: ցեղերի անատոմիական ուսումնասիրության ամփոփում: քրոմոսոմների, ծաղկափթշու հետազոտությունների ամփոփում: Հայաստանի բուսականության դասակարգման սխեմայի մշակման ամփոփում, հաշվետվությունների պատրաստում:	Մորֆոլոգո-հերբարիումային, պալիտոլոգիական, ցիտոլոգիական երկրաբուսաբանական, Ֆիզիոլոգիական ուս.	Հոդվածների տպագրում Ամփոփիչ Հաշվետվության պատրաստում	01.10.2022-31.12.2022	45 467,13
Ընդամենը						151 557,1

Կազմակերպության տնօրեն՝

 (Անահիտ Ղուկասյան) (ստորագրություն) (անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝

 (Անահիտ Ղուկասյան) (ստորագրություն) (անուն ազգանուն)



* Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել են ապրիլի 15-ի դրությամբ:

Հավելված 4
«23» 01 2022 թ.
N 673 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ
Ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի
(ծրագրի անվանումը)

հազար դրամ

Հ/հ	Հողվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ	134 070	26 814	33 517,5	33 517,5	40 221
2	տնտեսական և այլ ծախսեր*	17 487,1	3 497,4	4 371,8	4 371,8	5 246,1
ԸՆԴԱՄԵՆԸ		151 557,1	30 311,4	37 889,3	37 889,3	45 467,1

Կազմակերպության տնօրեն՝


(ստորագրություն)

(Արսեն Արսենյան)
(անուն ազգանուն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝


(ստորագրություն)

(Սուսաննա Մարտիրոսյան)
(անուն ազգանուն)

Կ.Տ.



* Բուհերում իրականացվող ծրագրերի համար նախատեսվել է ծրագրի ֆինանսավորման առնվազն 3%-ը, մյուս գիտական կազմակերպություններում իրականացվող ծրագրերի համար՝ առնվազն 5%-ը

Հավելված 4.1
 «27» 01 2022 թ.
 N 6-13 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՄԵՐ⁺

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	12 715,2
	էլեկտրաէներգիայի ծառայություն	2 200
	գազի ծառայություն	4 000
	ջրամատակարարման ծառայություն	1 800
	ոռոգում	3 900
	կապի ծառայություն	550
	ինտերնետ կապ	115,2
	աղբահանություն	150
2	Գույք	500
3	Սարքեր և սարքավորումներ	
4	Նյութեր	110
5	Գործուղումներ	300
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	-
7	Արշավախմբեր	-
8	Հրատարակման ծախսեր	-
9	Սեզոնային այգեգործ-բանվորներ	4361,9
Ընդամենը		17 487,1

Կազմակերպության տնօրեն՝


 (ստորագրություն)

(Անահիտ Դուկասյան)
 (անուն ազգանուն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝


 (ստորագրություն)

(Սուսաննա Մարտիրոսյան)
 (անուն ազգանուն)



* Բուներում իրականացվող ծրագրերի համար չի լրացվում

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ
Ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի
(ծրագրի անվանումը)

h/ h	ազգանուն	անուն	հայրանուն	գիտական աստիճան	պաշտոն	Աշխատավարձ ներառյալ եկամտային հարկը
	1	2	3	6	7	9
1.	Ալեքսանյան	Ալլա	Սամվելի	կենս. գիտ. թեկնածու	ավագ գիտաշխատող	50000
2.	Ալեքսանյան	Նազիկ	Գագիկի	կենս. գիտ. թեկնածու	գիտաշխատող	150000
3.	Ալոյան	Արմինե	Սուրենի		ավագ լաբորանտ	109700
4.	Աշոյան	Արփինե	Լեռնիկի	կենս. գիտ. թեկնածու	գիտաշխատող	150000
5.	Ասատրյան	Աննա	Թելմանի	կենս. գիտ. թեկնածու	ավագ գիտաշխատող	199700
6.	Ասատրյան	Մարիետա	Յաշայի	կենս. գիտ. թեկնածու	գիտաշխատող	150000
7.	Ավագյան	Դավիթ	Ժիրայրի		Սևանի բաժանմ. այգեգործ-բանվոր	93300
8.	Արասխանյան	Արամ	Շեկոյի		բանվոր	90000
9.	Արասխանյան	Նորիկ	Շեկոյի		փականագործ	120000
10.	Արսխանյան	Ազիզ	Ռազմիկի		էներգետիկ	100000
11.	Բոգդանյան	Աշոտ	Մկրտչի		տնտեսավար- պարետ	145000
12.	Գաբրիելյան	Իվան	Գեորգիի	կենս. գիտ. դոկտոր	առաջատար գիտաշխատող, բաժնի վարիչ	349800
13.	Գասպարյան	Լուսիկ	Վարազդատի		հաշվապահ	120000
14.	Գատրյան	Գայանե	Մանուկի		գիտաշխատող	150000
15.	Գրիգորյան	Անատոլիա	Արտավազի		կրտսեր գիտաշխատող	119700
16.	Գրիգորյան	Լևոն	Մկրտիչի	կենս. գիտ. թեկնածու	տնկարանի վարիչ	130000
17.	Գրիգորյան	Մանիկ	Մերուժանի		կրտսեր գիտաշխատող	119700
18.	Դանիելյան	Աշխեն	Համլետի		կրտսեր գիտաշխատող	119700
19.	Էլբակյան	Արաքսյա	Հարությունի	կենս. գիտ. թեկնածու	ավագ գիտաշխատող	199700
20.	Խանամիրյան	Ելենա	Գագիկի		տնօրենի օգնական, կադրերի գծով մասնագետ	երեխայի խնամքի սրճակուրդ

21.	Խաչատրյան	Լիլիթ	Ռոբերտի		կրտսեր գիտաշխատող	59700
22.	Խաչատրյան	Սիրուշ	Էդուարդի		ավագ լաբորանտ	109700
23.	Հակոբյան	Ժանետա	Անդրանիկի	կենս. գիտ. դոկտոր	առաջատար գիտաշխատող	250000
24.	Հայրապետյան	Ալլա	Մկրտիչի	կենս. գիտ. դոկտոր	առաջատար գիտաշխատող, բաժնի վարիչ	349800
25.	Հայրապետյան	Նարինե	Ահարոնի		կրտսեր գիտաշխատող	119700
26.	Հարությունյան	Ադունիկ	Վիլհելմի		ծաղկաբույծ- մասնագետ	93300
27.	Հովակիմյան	Ժաննա	Հովիկի	կենս. գիտ. թեկնածու	ավագ գիտաշխատող, գիտ. քարտուղար	350000
28.	Հովակիմյան	Հարություն	Հովիկի		Վանաձորի բաժանմունքի վարիչ	125000
29.	Հովհաննիսյան	Լուսյա	Նուրիջանի		բուսապահոցի տեխնիկ	90000
30.	Հովհաննիսյան	Հռիփսիմե	Իգիթի		կրտսեր գիտաշխատող	119700
31.	Հովհաննիսյան	Մարինե	Էդգարի	կենս. գիտ. դոկտոր	առաջատար գիտաշխատող	250000
32.	Հովհաննիսյան	Մարինե	Ղևոնդի		տեխնիկ	93300
33.	Ղամբարյան	Արմեն	Անուշավանի		Վանաձորի բաժանմ. բանվոր	90000
34.	Ղամբարյան	Ռաֆայել	Արմենի		Վանաձորի բաժանմ. բանվոր	93300
35.	Ղանդիլյան	Նինա	Պապինի	կենս. գիտ. թեկնածու	ավագ գիտաշխատող	199700
36.	Ղարիբյան	Մարգարիտա	Գրիշայի		գրադարանավար, առաջատար մասնագետ	95000
37.	Ղուկասյան	Անահիտ	Գեորգիի	կենս. գիտ. թեկնածու	տնօրեն, առաջատար գիտաշխատող	525000
38.	Ղուկասյան	Գրետա	Սերգեյի		առաջատար մասնագետ	90000
39.	Ղևոնդյան	Անահիտ	Պատվականի		էքսկուրսավար	120000
40.	Մարգարյան	Լուսինե	Վահանի	կենս. գիտ. թեկնածու	ավագ գիտաշխատող	50000
41.	Մանուկյան	Արմեն	Արտավազի		Սևանի բաժանմ. այգեգործ-բանվոր	90000
42.	Մարդանյան	Յուրիյ	Նիկոլայի		բանվոր	96000
43.	Մարտիրոսյան	Լորա	Յուրիի	կենս. գիտ. թեկնածու	ավագ գիտաշխատող	199700
44.	Մարտիրոսյան	Մուսաննա	Մարգսի		գլխ. հաշվապահ	215000
45.	Մելքոնյան	Գոհար	Ալբերտի		տնօրենի օգնական, կադրերի գծով մասնագետ	140000

					(փոխարինող)	
46.	Միխայլովա	Ելենա	Սերգևնա		բանվորուհի	90000
47.	Մնացականյան	Միմոն	Միխայելի		Սևանի բաժանմ. վարիչ	125000
48.	Մովսիսյան	Գագիկ	Գուրգենի	կենս. գիտ. թեկնածու	գիտաշխատող	110000
49.	Մուրադյան	Ալվարդ	Հրանտի		կրտսեր գիտաշխատող	119700
50.	Մուրադյան	Նելլի	Նորիկի		գիտաշխատող	150000
51.	Նավասարդյան	Եվգենյա	Միխայելի	կենս. գիտ. թեկնածու	ավագ գիտաշխատող	110000
52.	Նազարյան	Հարություն	Մարտունի		մեխանիկ- վարորդ	120000
53.	Նազարյան	Նաիրա	Ռաֆիկի		հավաքարար	115000
54.	Ներսեյան	Անուշ	Անրիի	կենս. գիտ. թեկնածու	առաջատար գիտաշխատող, բաժնի վարիչ	349800
55.	Շաբոյան	Գայանե	Գևորգի		լաբորանտ	102500
56.	Շատոյան	Նորիկ	Հմայակի		գլխավոր գյուղատնտես	190000
57.	Պապիկյան	Աստղիկ	Սարգսի		կրտսեր գիտաշխատող	119700
58.	Պետրոսյան	Աղվան	Սուրենի		այգեգործ-բանվոր	96000
59.	Պողոսյան	Նաիրա	Անդրուշի	կենս. գիտ. թեկնածու	գիտաշխատող	50000
60.	Զանջուղազյան	Կարինե	Զոհրաբի		կրտսեր գիտաշխատող	119700
61.	Ռուդով	Ալեքսանդր	Վախթանգի		ավագ գիտաշխատող	199700
62.	Սարգսյան	Մերինե	Վոլոդյայի	կենս. գիտ. թեկնածու	ավագ գիտաշխատող	199700
63.	Սոնյան	Հասմիկ	Հովհաննեսի		կրտսեր գիտաշխատող	119700
64.	Վարդանյան	Ժիրայր	Հմայակի	կենս. գիտ. դոկտոր	գիտական ղեկավար, բաժնի վարիչ	501000
65.	Տեր-Ղուկասյան	Անուշ	Երվանդի		բանվորուհի	90000
66.	Փայտյան	Յուրիկ	Ենոքի		գյուղատնտես	120000
67.	Օգանեզովա	Գոհարիկ	Հրանտի	կենս. գիտ. դոկտոր	գլխավոր գիտաշխատող	250000
68.	Օհանյան	Շուշան	Հրանտի		տեխնիկ	90000
69.	Ֆայվուշ	Գեորգի	Մարկի	կենս. գիտ. դոկտոր	բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող	349800
70.					գիտության գծով փոխտնօրեն	335000

71.				այգեգործ-բանվոր	90000
72.				այգեգործ-բանվոր	90000
73.				այգեգործ-բանվոր	90000
Ընդամենը					11 172 500

Կազմակերպության
տնօրեն՝


(ստորագրություն)

(Անահիտ Նուկայան)
(անուն ազգանուն)

Կազմակերպության
անձնակազմի կառավարման
բաժնի պետ՝


(ստորագրություն)

(Գոհար Մելիքոյան)
(անուն ազգանուն)

